Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Արման Խաչատրյան:

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Նիդերլանդներ, քաղաք Ամստերդամ, 2017թ. սեպտեմբերի 14-ից 16-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

Հեռարձակման միջազգային կոնվենցիա:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Հեռարձակման միջազգային կոնվենցիայի կողմից կազմակերպվող IBC-2017 ամենամյա միջոցառմանը:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Միջոցառման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում արբանյակային ինտերնետի զարգացման հնարավորությունները և հեռանկարները, թվային ռադիոհեռարձակման DAB+ ստանդարտի ներդրման նպատակահարմարությունը, Երևանի հեռուստահաղորդիչ կենտրոնում FM հաղորդիչ կոլեկտիվ անտենային համակարգի

տեխնիկական լուծումները, թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի գլխամասային կայանի սպասարկման հետ կապված հարցերը և այլն:

Թվային ռադիոհեռարձակման DAB+ համակարգի արտադրողները, բացի տեխնիկական լուծումներից, պատրաստակամություն հայտնեցին նաև տրամադրել այլ երկրներում համակարգի ներդրման փորձի, բիզնես-մոդելների և լրացուցիչ հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

IntelSat-ի և GlobeCast-ի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց ընթացիկ տարում շարունակել քննարկումները արբանյակային ինտերնետ ծառայությունների մատակարարման միջազգային նորացված ծրագրերում ՀՀՌՑ-ի հնարավոր ինտեգրման շուրջ:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Այցի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ IntelSat (ԱՄՆ) և GlobeCast (Ֆրանսիա) արբանյակային օպերատորների, ինչպես նաև, Ericsson (Շվեդիա), TelSat (Իտալիա), DiGiDiA (Ֆրանսիա), Paneda (Նորվեգիա), Factum Radioscape (Անգլիա), AVT (Գերմանիա) ընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնցից վերջին չորս ընկերությունները հանդիսանում են թվային ռադիոհեռարձակման DAB+ ստանդարտի տեխնիկական լուծումների և սարքավորումների արտադրողներ:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արման Խաչատրյան

20.09.2017թ.